# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հունիսի 24-ի թիվ 1.2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «**ԴԴ-ԳՀԱՊՁԲ**-20/37»

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 23.06.2020թ.-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 25.06.2020թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում 1

Հարգելի Պատվիրատու, խնդրում եմ տրամադրել նշված ընթացակարգի վերաբերյալ հետևյալ պարզաբանումները: Մասնավորապես՝

1. 2,3, և 4-րդ չափաբաժինների մասով պաշտոնական սերվիսի անհրաժեշտությունը և նպատակը:

2. Արդյոք բոլոր չափաբաժինները ենթակա են սերտիֆիկացման, եթե այո խնդրում եմ հստակ նշեք, որ իրավական ակտով է սահմանված:

3 Գնումների օրենսդրությամբ հստակ սահմանված է, որ հրավերով պետք չէ սահմանել այնպիսի չափանիշեր, որոնք հավելյալ պահանջ կարող է դիտարկվել, Ձեր հրավերով տեխնիկական չափորոշիչներից զատ կան ևս այլ չափորոշիչներ, օրինակ՝ Վաճառողը պետք է ներկայացնի ապրանքն արտադրողիցկամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ:Հակասություն չեք տեսնում օրենսդրության հետ նման պահանջը:

Հարցադրում 2

Հարգելի պատվիրատու,

Քանի որ 1-ին չափաբաժնում պահանջվող տեխնիկական բնութագրերին ամբողջովին բավարարող մոդելը հանվել է արտադրությունից և փոխարինվել է մեկ այլ մոդելով, խնդրում եմ պարզաբանել, արդյոք ընդունելի՞ են հետևյալ շեղումները տեխնիկական բնութագրից (մնացած բնութագրերին բավարարելու պարագայում).

1. առաջին տպվող էջի (A4) դուրս գալու ժամանակահատվածը՝ մինչև 12.3վ-ի փոխարեն մինչև 12.4վ,

2. քարթրիջների քանակը՝ 4 հատ (առնվազն 1300 էջ)-ի փոխարեն 4 հատ քարթրիջ, որոնցից սևի ռեսուրսը 1350 էջ է, իսկ գունավորներից յուրաքանչյուրինը՝ 1250 էջ:

Նաև խնդրում եմ հաստատել, որ նշված են տպիչի համար նախատեսված քարթրիջների հնարավոր ռեսուրսները, այլ ոչ թե լրակազմում ներառված, քանի որ տպիչի լրակազմում ներառված են սկզբնական (starter) քարթրիջներ՝ ոչ լրիվ լցվածությամբ:

Կախավ շնորհակալություն:.

Պարզաբանում 1

*Հարգելի մասնակից,*

*Հայտնում ենք, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում կատարվել են փոփոխություններ:*

<u>Պարզաբանում 2</u>

*Հարգելի մասնակից,*
*Հայտնում ենք, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում կատարվել են փոփոխություններ:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Օֆելյա Ասատրյանին:

Հեռախոս՝ 010 511-787:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/37» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: